Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1982

"SOURBASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ՍԱ-34 16. 01 . 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Գնորդ) և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Վաճառող) միջև կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6 (2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2 (2024թ մարտ 15), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11 (2024թ հուլիս 23) ծածկագրերով դեղորայքի մատակարարման պայմանագրեր (այսուհետ նաև Պայմանագրեր), որոնց շրջանակներում «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին՝ 24.12.2024թ-ին ներկայացվել է պատվեր-հայտ:

Պայմանագրերի համաձայն մատակարարումները պետք է իրականացվեին ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն հայտով ներկայացված ոչ մի չափաբաժնի մասով մատակարարում չի իրականացվել:

Հարկ եմ համարում նշել, որ Պայմանագրերի շրջանակում դեղորայքի պատվերները իրականացվել են Վաճառողի հայտով նշված tender@alfapharm.am էլեկտրոնային հասցեին գրավոր ձևաչափով պատվեր ուղարկելով: Ի պատասխան ուղարկված հերթական պատվեր-հայտի Վաճառողի կողմից 2024թ. օգոստոս 27-ին եղել է պատասխան նամակ, որ *«Ապրանքները չենք կարող մատակարարել, քանի որ Սուրբ Աստվածամայր ԲԿ ՓԲԸ-ն*

տենդերային պայմանագրի շրջանակներում ունի ժամկետանց պարտք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին՝ 4776539 ՀՀ դրամ, խնդրում ենք կատարել փոխանցում հետագա պարտավորությունները պատշաճ կատարելու համար» /նամակը կցվում է/: Որից հետո «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին փոխանցվել է 2,000,000 ՀՀ դրամ /կցվում է վճարման անդորրագիրը/, սակայն Վաճառողը դարձյալ հրաժարվել է իրականացնել մատակարարում՝ բանավոր կերպով պնդելով ամբողջական մարել պարտքը, որն անհնար էր, քանի որ ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների մեծ մասը և այլ տնտեսվարողներ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի հանդեպ ունեին և ներկայումս էլ ունեն չկատարված ֆինանսական պարտավորություններ: Մինչդեռ նման պայմաններում, Վաճառողն իրավունք ուներ առաջնորդվել Պայմանագրերի 6.5-րդ կետով՝ գումարի վճարման ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը ևս չի իրականացրել: «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնը պարտավորվում էր վճարել նաև վերոնշյալ հաշվարկված տույժերը:

Կարևոր է նշել, որ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության խոշորագույն և բազմապրոֆիլ մանկական բժշկական հաստատություն, որտեղ մատուցվում են բարձրորակ բժշկական ծառայություններ՝ Երևան քաղաքի և մարզային բնակչության համար: Բժշկական կենտրոնը տարեկան սպասարկում է մոտավորապես 50.000 պացիենտների: Կենտրոնում գործում է միակը Հայաստանում՝ մանկական կրծքային վիրաբուժության բաժանմունքը, մանկական և նորածնային վիրաբուժության, մանկական նյարդավիրաբուժության, 3-րդ մակարդակի մանկական վերակենդանացման, պլաստիկ վիրաբուժության և միկրովիրաբուժության, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, քիթկոկորդականջաբանության,նյարդաբանական, գաստրոէնտերոլոգիական, մանկաբուժական, վերականգնողական և ֆիզիոթերապիայի բաժանմունքները:

Ելնելով վերոգրյալից «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների չկատարելը՝ անհրաժեշտ դեղորայքի չմատակարարելը, ստեղծել է արհեստական խոչընդոտ բժշկական կենտրոնի բնականոն գործընթացի համար, ինչը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ կենտրոնում բուժվող

խնդրահարույց է վերակենդանացման բաժանմունքում բուժօգնություն ստացող երեխաների համար, որոնց մեծ մասը նորածիններ են:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024թ. դեկտեմբերի 30-ին ներկայացված զեկուցագրի համաձայն՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում չի իրականացրել ապրանքների մատակարարումը:

Պայմանագրերի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է միակողմանի մասնակի լուծել վերոնշյալ պայմանագրերը պատվեր-հայտում ներառված չափաբաժինների մասով՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին կվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի դեկտեմբերի 30-ի ՍԱ-725 գրությամբ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն հայտով նշված tender@alfapharm.am

էլեկտրոնային հասցեին 2025թ. հունվարի 07-ին ծանուցվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5 (կնքված 2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9 (կնքված 2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5 (կնքված 2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6 (կնքված 2024թ հունվարի 29), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2 (կնքված 2024թ մարտ 15), N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11 (կնքված 2024թ հուլիս 23) ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2025 թվականի հունվարի 07-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Ուսումնասիրելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագիրը և հաշվի առնելով այն փաստը, որ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի կողմից գրությամբ սահմանված ժամկետում չի իրականացվել պայմանագրերի կատարման և որակավորման ապահովումների վճարումը, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	

			պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	պայմանագրի միակողմանի լուծմանը		
«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ	02606482	ք.Երևան, Շիրակի 1/68	Պայմանագրերի 2.1.7 կետ			16.01.2025թ. N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-9, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5, N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-6 N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/16-2 N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/32-11

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/